



Երևանի կենդանաբանական այգու այս տարվա պլանները



- 2013 թվականին կավարտվի վագրերի ու արջերի համար նախատեսված նոր ազատավանդակների կառուցումը:
- 2013-ի գարնանն իր նոր ազատավանդակ կտեղափոխվի պտավոր բորենին (*Crocota crocuta*): Նոր ազատավանդակը կառուցվել է կենդանատեսակի համար EAZA-ի չափորոշիչներին համապատասխան և ունի 650 քառակուսի մետր տարածք:



Նախատեսվում է ավարտին հասցնել՝

- մանկական այգու,
- կերախոհանոցի,
- բուժկենտրոնի,
- փղի ձմեռանոցի վերանորոգման,
- անիմաթերապիայի կենտրոնի շինաշխատանքները:

Երևանի կենդանաբանական այգին այս տարի նոր կենդանիներ ձեռք կբերի՝

- ջայլամ,
- բենգալյան վագր,
- զեբրեր,
- մողեսներ,
- մրջնակերներ:

Երևանի կենդանաբանական այգին նշանավորեց Նոր տարին մի շարք միջոցառումներով



Երևանի կենդանաբանական այգին արդեն երկրորդ տարին է հրավիրում է բոլորին միանալու «Ապրող ծառ» քարոզարշավին, որը նախաձեռնել է Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC): Այս քարոզարշավը հնարավորություն է տալիս գնելու կամ վարձակալելու կենդանի տոնածառեր՝ այդպիսով նպաստելով Հայաստանի անտառների պահպանմանը:

2012թ.-ի դեկտեմբերի 15-ից 2013թ.-ի հունվար 13-ը Հյուսիսային պողոտայում առաջին անգամ անցկացվեց Ամանորյա տոնավաճառ, որին այգին ներկայացավ իր տաղավարով: Այգու մասնակցությունը հնարավոր դարձավ Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ: Այգու տաղավարում ներկայացված էին «2ու» ամսագիրը, Երևանի կենդանաբանական այգու 2013թ.-ի օրացույցը, ինչպես նաև այգու էկոլոգիական ակումբի սաների կողմից պատրաստված Ամանորյա ձեռագործ կախազարդեր, տոնածառի խաղալիքներ, հուշանվերներ և իհարկե վերամշակված թղթից պատրաստված նոթատետրեր, նկարչական այրումներ ու Նոր Տարվա բացիկներ:

Ամանորյա տոնավաճառը հիանալի հնարավորություն էր հանրության ավելի լայն շրջանակներին ներկայացնելու «Ապրող ծառ» նախագիծը: Ծատ անցորդներ, իմանալով նախագծի մասին, այցելում էին այգի և գնում կամ վարձակալում տոնածառեր: Ընդհանուր առմամբ, տարեցտարի ավելանում է այն մարդկանց թիվը, ովքեր ցանկանում են ունենալ կենդանի տոնածառեր կտրվածների փոխարեն: Սա նշանակում է, որ հայ քաղաքացիների մեջ բնապահպանական գիտակցությունը բարձրանում է:



Հիշեցնենք, որ վաճառքից և վարձույթից ստացված ողջ հասույթը տրամադրվելու է Երևանի կենդանաբանական այգու կենդանիների խնամքին, իսկ ծառերը գարնանը կտնկվեն այգու տարածքում: Ծառատունկին կմասնակցեն նաև կենդանի ծառեր վարձակալողները:

Կենդանիների զբաղվածությունը և ցուցադրական կերակրումները Երևանի կենդանաբանական այգում



Երևանի կենդանաբանական այգին արդեն մեկ տարուց ավելի է, ինչ իրականացնում է կենդանիների ցուցադրական կերակրումներ՝ կենդանիներին ակտիվացնելու և նրանց բնական վարքն ապահովելու համար: Ծուցադրական կերակրումները ներառում են տարբեր բաժինների (գիշատիչներ, սմբակավորներ, թռչուններ, սողուններ) 20 կենդանատեսակներ: Կերակրումների ժամանակ կենդանիների խնամողները պատմում են կենդանու առանձնահատուկ վարքագծի կամ կարիքների մասին:

Բացի դրանից, կենդանիների ակտիվությունն ապահովվում է տարբեր խաղերի միջոցով: Այս ոլորտում այգու անձնակազմի գիտելիքները բարձրացնելու համար այգու 3 աշխատակիցներ Նոյեմբերի 19-ից 22-ը մասնակցեցին Թբիլիսիում անցկացվող վերապատրաստման դասընթացի, որը հիմնականում նվիրված էր անազատ պայմաններում գտնվող կենդանիների վարքագծի խնդիրներին: Կենդանիներին հոգեբանորեն առողջ պահելու համար կարևոր է ուշադրություն դարձնել նրանց բնական վարքագծին և ապահովել ճիշտ զբաղվածություն: Այս նպատակին հասնելու համար ժամանակակից կենդանաբանական այգիները մշակել են այսպես կոչված «հարստացման» նոր մեթոդներ: Կենդանաբանական այգիների և ակվարիումների եվրոպական ասոցիացիայի (EAZA) կողմից կազմակերպված այս դասընթացի ընթացքում, ներկայացվեցին բազմաթիվ մեթոդներ: Այգու աշխատակիցները հնարավորություն ունեցան ծանոթանալու կենդանիներին պահելու ժամանակակից մեթոդներին: Թրեյնինգներն անցկացնում էին Էմիլիա Լաստիկան, ով վայրի կենդանիների հայտնի անասնաբույժ է Ֆիլիպիններից և Վալերիա Հեբբը ով հանդիսանում է «The shape of Enrichment» ամերիկյան ոչ առևտրային կորպորացիայի համահիմնադիրը: Դասընթացը նախատեսված էր հատուկ այն կենդանաբանական այգիների համար, որոնց ֆինանսական միջոցները բավականին սուղ են և հետևաբար ներկայացվեցին հարստացման այնպիսի մեթոդներ, որոնք մատչելի են, հեշտ կիրառելի և քիչ ծախսատար: Մասնակիցները ստացան շատ օգտակար տեղեկություններ, ինչպես օրինակ այն, որ ցանկացած կենդանու կեր գետնին չի կարելի լցնել՝ կենդանիների համար հնարավոր վարակի աղբյուրից խուսափելու համար:



Սակայն, անազատ պայմաններում գտնվող կենդանիներին ոչ միայն ակտիվացնում է անհրաժեշտ իրենց բնական վարքագիծը դրսևորելու համար, այլև հոգեբանական խնամք: Կենդանաբանական այգու շատ կենդանիներ տառապում են միայնությունից, կարծրատիպային սովորություններից, ճաղավանդակների առկայությունից: Դեռ նախորդ տարվանից այգին ունի կենդանիների հոգեբան, ով փորձում է յուրաքանչյուր կենդանու համար անհատական մոտեցում

մշակել: Կենդանիների հոգեբան Սոնա Հակոբյանը խորությամբ ուսումնասիրում է առանձին կենդանիների, գնահատում է նրանց խնդիրները և մշակում մեթոդներ՝ բարձրացնելու համար կենդանիների կենսապայմանների որակը: Սկզբնական շրջանում հոգեբանը հիմնական տեղեկությունը ստանում էր ցուցադրական կերակրումների ժամանակ: Սակայն այժմ Սոնա Հակոբյանն ուրախությամբ նշում է, որ այգու կենդանիների խնամողներն առավել ուշադիր են դարձել իրենց կենդանիների նկատմամբ և նրանց ոչ նորմալ կամ տարօրինակ վարքագծի դրսևորման դեպքում արձագանքը չի ուշանում:



Այգու այցելուների քանակը ձմռանը

Ձմռանը Երևանի կենդանաբանական այգու այցելուների թիվը՝ տարվա այլ եղանակների հետ համեմատած փոքր-ինչ նվազում է: Սակայն եթե համեմատական ենք անցկացնում վերջին տարիների ձմռան ամիսների հետ, վստահաբար կարող ենք ասել, որ ցուցանիշները բավականին բարձր են. օրինակ՝ 2010-ի ձմռան ամիսներին այգի են այցելել 1714, 2011-ին՝ 2104, իսկ 2012-ին՝ 3886 այցելու: Այգին ձմռանն աշխատում է առավոտյան ժամը 10:00-ից, մինչև 17:00-ը:



Ձմռան այս ամիսներին մինչև մարտի 31-ը գործում է ձմեռային ամիսների համար նախատեսված կենդանիների ցուցադրական կերակրումների ժամանակացույցը: Որպես հիշեցում տեղեկացնենք, որ ցուցադրական կերակրումները տեղի են ունենում ամեն շաբաթ և կիրակի օրերին և այգու այցելուները հնարավորություն ունեն տեսնել Ամուրյան վագրերի ցուցադրական կերակրումը՝ ժամը 12:00-ին, Եվրոպական եղնիկներինը՝ 12:30-ին, Ուղտաձերինը՝ 13:00-ին, Աֆրիկյան առյուծներինը՝ 13:30-ին, սողուններինը՝ 14:00-ին, Սև և Սպիտակագլուխ անգղերինը՝ 15:00-ին:

Երևանի կենդանաբանական այգում գոյություն ունի կենդանիների զբաղվածության հատուկ ծրագիր: Այս նպատակով արտերկրից ձեռք են բերվել կենդանիներին զբաղեցնելու համար հատուկ բումներ գնդակներ, զբաղվածության տարբեր պարագաներ, որոնց միջոցով հնարավոր է դարձել հատկապես ձմեռանոցներում ապրող կենդանիների համար ձմռան ամիսներին ապահովել զբաղվածությունն ու նպաստել նրանց առողջ ապրելակերպին:

Հունվարի 26-ից վերսկսվեց Երևանի կենդանաբանական այգու կրթական կենտրոնում գործող էկոլոգիական ակումբի դասերը: Էկոակումբի սաները ոչ միայն մասնակցում են էկոլոգիայի, կենդանաբանության դասընթացների, այլ նաև աշակցում են այգու աշխատակիցներին կենդանիների խնամքի, զբաղվածության ապահովման և կերակրման հարցերում: Աջակցելով այգու աշխատակիցներին երեխաները հնարավորություն ունեն մոտիկից շփվելու, կենդանիների մասին նոր բաներ սովորելու, ինչը նրանց սեր է ներշնչում կենդանիների հանդեպ: Ավելին, Էկոլոգիական ակումբը մի տեղ է, որտեղ պատանիները կարող են ներսից ծանոթանալ այն հմտություններին և մասնագիտություններին, որոնք անհրաժեշտ են այգին ղեկավարելու համար: